

Հ Ա Շ Ի Ի

ՄԱՐԻԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

ՆՈՐ — ՆԱԽԻՉԵՒԱՆՆԻ 1868 ԱՄԻ

Առաջին անգամն է այս, որ Հոգարարձուաց խորհրդարանս Ընկերութեան հաստատմանէն յետոյ, պատու ունի ներկայացընել պատուական անդամոց Ընդհանուր ժողովոյն, Ընկերութեան անցեալ ամի տարեկան հաշիւը. առաջին անգամն է այս, որ միահամուռ ժողովուած պիտի տեսնէր այս բարեգործական Էդրայրութեան բազմամեայ աշխատանաց առաջին պատուները: Բազմամեայ կրսէ խորհրդարանս, վասն զի այս զովիկի ազգոգուտ Ընկերակցութեան սկիզբը, ինչպէս որ անդամոց շատերուն յայտնի է, եղած է 1846 թուականին, երբ Չեղմէ մէկ քանի հայրենասէր եւ ուսումնատենչ անձանց ազնիւ սրբանքուն ցաւ երեւնալով իրենց պատանեկութեան ժամանակի հասակակից չքաւոր տղայոց դատարկ շրջիլը եւ անուսումնութիւնը, կարեկցութեան արդար գրացմունքը ծագել է նոցա սրտերնուն մէջ այնպիսի անուսումն եւ դատարկաշրջիկ տղայոց մէկ քանիին ուսումն եւ կրթութիւն տալու, եւ այս պատճառաւ սահմանել են իրենց մէջ զանձանակ մը, յորում առջի մէկուդ թէպէտ աննշան դումար դրամոց կը ծղէր իւրաքանչիւր ընկերակից պատանին, բայց ետքը այնպիսի պատուական եղբայրակիցներուն եւ դրամագլխոյն յաւելնալովը, որոշեր են իրենց մէջ համահաւասար տարեկան տուրք մը եւ այս իրենց փոքրիկ, բայց անզին ձեռնարկութիւնը յանձնելով Տիրամօր սուրբ Աստուածածնի պաշտպանութեանը, շարունակեր են զպն անվներ եւ անվբողով մինչեւ 1867 ամն, այսինքն մինչեւ իրենց ընկերութեան կատարելապէս հաստատման օրն, որ եղն յիշեալ տարւոյն հակտեմբեր ամսոյ մէջ:

Վեհափառ Հայրապետն ժեր, Սրբազնազգայն Կաթողիկոսն ամենայն Հոյոց Տէր Գէորդ Գ. իւր Նոր-Նախիջեանի շնորհարիւր այցելութեան ժամանակ, առանձին ուշադրութիւն դարձնելով առ այս Ընկերութիւն եւ սորա նպատակը համեմատ գտնելով իրեն ճարի դրած, ազդիս մատաղերամ մանկուոյն ուսման եւ յառաջադիմութեան համար անելու ձեռնարկութեանց, սիրով ընկալաւ Ընկերութեանս առաջար-

կած կանոնները եւ հաստատեց զանոնք իւր բարեխնամ Կանոնական, այնու նպատակաւ որ Ընկերութիւնս պահպանէ եւ կառավարէ իւր արդեամբքը Նախիջեանի Սուրբ Խաչ վանքի մէջ քաջօրկոյ ձառանգաւորաց Գարոցն:

Ինչպէս որ կիրելի առաջուան մատեաններէն եւ հաշիւներէն, որք անկորուտ պահպանուած են խորհրդարանին մէջ, այս կենցաղօրուտ գործոյն սկզբնապատճառ անձինքն եւ ապա հետզհետէ անդամ զբովորներն հազուակիւն Միաբանութեամբ իրենց բռնած զովիկի ընթացքէն երբէք չեն խոտորած: եւ ժամանակ ժամանակ բարեգործութիւններ արել են, յորոց առաջինն կարելի է ասել Էկատերինադար քաղաքին Հայոց նորահաստատ գարոցին համար եղած դրամային օժանդակութիւնն է: Այն միաբանութիւնը եւ եռանդը աւելի յայտնի եղաւ Ընկերութեանս հաստատմանէն յետոյ, որով եւ կարճ ժամանակէն սկիզբ եղաւ բացման ձառանգաւորաց դարոցին:

Ընկերութիւնս իւր հաստատման ժամանակ այսինքն անցեալ 1868 ամի սկիզբը ունէր 4000 ռուբլի արծ. դրամագլուխ, յորոց երկու հազար (2000) ռ. ըստ գծրութեան Գ. յօդուածոյ կանոնադրութեան, հաստատելոյ ի Վեհափառ Հայրապետէն ժերոյ, համարելով հիմնական դրամադուխ, մնացեալ 2000 ռուբլին համարուած էր պատրաստական դրամադուխ, որ ըստ գծրութեան Ե. յօդուածոյ Կանոնադրութեան դրուած էր մասնաւոր անձանց ի շահեցողութիւն տակսեօք ընդ երաշխաւորութեամբ Հոգարարձուաց խորհրդարանին մի տարի ժամանակաւ:

Խորհրդարանս ըստ յանձնարարութեան ընդհանուր ժողովոյ անդամոց Ընկերութեան, մտազիր վնեկով անցեալ տարւոյ յուլիս ամսոյ սկիզբը, բանալ ձառանգաւորոց Գարոցն սուրբ Խաչ վանքին մէջ, Նախիջեանի Հոգեւորական Կառավարութեան առաջարկած չքաւոր հոգեւորականաց ուղուց ցուցակէն որոշնց յաշակերտութիւն ի դարոցին ուժ տղայս եւ ի թուոյ Հոգաբարձուաց խորհրդարանիս ընտրելով երկու անձինս, այն է զՏէր Խաչատուր քահանայն Զարիֆեանց եւ զպարոն Յովհան Գրիգորեան Զուպաւեանց, Գարոցին հոգարարձութեան պաշտօնը փարելու համար, երկամեայ ժամանակաւ համեմայն կանոնադրութեանն առանձին յայտարարութեամբ խնդրեց ի Նորին Վեհափառութենէն որպէս այս եր-

կու հոգաբարձուաց հաստատութիւնը, նմանապէս եւ այն որ դպրոցին ծախքն բոլորովին Ընկերութեան վրայ չծանրանալու, եւս եւ փութով դպրոցին բացման սկիզբ անկու համար, աշակերտաց սնունդն միայն մատակարարուի վանքի արդիւնքէն: Վեհափառ Հայրապետն ընդունեց խորհրդարանիս այս խնդիրը եւ անոր կատարումը հրամայեց առանձին Կանդակաւ վանքի Վանահօրն, որ ըստ զօրութեան Կանոնադրութեան է Տեսուչ ժառանգաւորաց Գարոցին: Ասկեց վերջը խորհրդարանս կանոնադրութեան 1: յօդուածոյն համեմատ հոգաց աշակերտաց ամենատեսակ պիտոյրը թէ իրենց վրայ եւ թէ Գարոցին մէջ վարձեց դասատուք եւ անցեալ տարւոյ յուլիսի 1-էն սկսաւ դասատուութիւնը այն Գարոցին մէջ, որ մինչեւ ցայժմ բաւական յառաջադիմութիւն կը տեսնուի աշակերտաց կողմանէ:

Խորհրդարանս անցեալ տարւոյ մէջ ունեցած մուտքն եւ դպրոցին ու իրեն կառավարութեան համար եղած ծախքն գրեկէն առաջ, հարկ կը համարէ յիշել որ Ճառանգաւորաց դպրոցին բացման ժամանակ քանի մը անձինք ընկերութեանս անդամներէն արին նուիրագործութիւններ եւ օգտակար առաջարկութիւններ, որոնցմէ պարոն Յովհաննէս Մինասեան Պէրպէրեանց բժիշկն ինքնակամ յայտնեց իրեն պատրաստութիւնը ձրիապէս բժշկել դպրոցին աշակերտները. պարոն Մահտեսի Կարապետ Գէորգեան Շըլթեանց զբաւոր խոստացաւ ամէն տարի ընծայել դպրոցին 60 ռուբլի արծ. պարոն Գէորդ Մելզոնեան Գոռօղլուեանց ղերձակին յայտնեց իրեն պատրաստութիւնը ամէն տարի հինգ աշակերտաց զգեստները զրիապէս կարել եւ պարոն Յովհաննէս Նաւուսեան Սահրատեանց ընծայեց դպրոցին հարիւր օրինակ «Տրովատոր» անուանեալ աշխատասիրութեան խրոյ:

**Ընկերութեան ունեցած մուտքն անցեալ տարւոյ մէջ եղած են**

- ա. ուր. — կրպ.
- ա.) Յաստախանցի Հայկազն Մկրտչէ, Գէորգեան Սիմէօնեանց մի պանքական պիլէթ ի զումար հարիւր ռուբլեաց, Ընկերութեան նախանձաւորի կողմէն մշտնջենաւորապէս պահպանելու համար . . . . . 100 — ,,
  - բ.) Ի Նոր-Նախիջեւանցի Տիկին Սըրբուհի Եթիշեանէ ընկալեալ է

- միանուագ, Ընկերութեան անդամոց անունը մշտնջենաւորապէս ունենալու համար . . . . . 120 — ,,
- գ.) Կամաւոր նուէր ի Նախիջեւանցի մահտեսի Կարապետէ Շըլթեանց վասն վեց ամսոց . . . . . 50 — ,,
- դ.) Ի 124 անդամոց տարեկան բաժանորդագին, յիւրաքանչիւրոյ վեց ռուբլի արծ. . . . . 744 — ,,
- ե.) Տոկոսիք տասն տոմսակոց ընկերութեան տ. փոխառիւնութեան . . . . . 50 — ,,
- զ.) Վեց ամսեայ տոկոսիք պանքական պիլէթին նուիրելոյ ի Տէր-Սիմէօնեանց Մկրտչէ . . . . . 2 — 50
- է.) Տոկոսիք դրամոց, սրբ տրուած էին վասն շահեցողութեան ի ձեռս մասնաւոր անձանց ընդ երաշխաւորութեամբ Հոգաբարձուաց խորհրդարանիս . . . . . 124 — 40

Ընդ ամէնն մտից զումարն եղել է 4167 — 90  
որ անցեալ տարւոյ սկիզբը եղած 4000  
ռուբլի արծ. զումարին հետ կը լինի . . . . . 5167 — 90

**Իսկ ծախք եղել են անցեալ տարւոյ մէջ**

- ա.) Վասն աշակերտաց ժառանգաւորաց դպրոցին, հանդիւրձեղեններու, զրենոյ եւ այլ ամենայն պիտոյից դասատանց, ճաշարանի, ննջարանի եւ այլոց . . . . . 560 — 22
- բ.) Ի պէտս կառավարութեան խորհրդարանիս . . . . . 405 — 94
- գ.) Հատուցեալ է վանահօր ի սնունդ վարժապետի միոյ վասն վեցից ամսոց . . . . . 55 — ,,

Ընդ ամէնն ծախսոց զումարն եղել է . . . . . 499 — 16  
զոր ի բաց հանելով ի մտից զումարէն կմնայ ներկայ 1869 տարւոյ սկիզբը

- ա.) Տասն տոմսակ առաջին նիքրին փոխառիւնութեան ի զումար . . . . . 1500 — ,,
- բ.) Մի պանքական պիլէթ . . . . . 100 — ,,
- գ.) Պատրաստի զումար դրամոց . . . . . 5268 — 74

Ընդ ամէնն . . . . . 4668 — 74